

## ԱՎ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ» ՊՈԷՄԻՆ ՇՈՒՐՁ\*

**Բանալի բառեր** – Ավ. Իսահակեան, Քր. Միքայելեան, Ժնև, պոէմ, գուսան, «Դրօշակ», Վենետիկ, տասնամեակ, էպիկական:

Մինոն Վրացեանի բացառիկ կերպով հարուստ արխիւին մէջ պահուած են շատերու կարգին նաև Աւետիք Իսահակեանէն ձեռագիր օրինակներ: Ստորև ներկայացուածը (թղթածրար 150/12-15) վերցուած է հաւանաբար Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ի թղթածրարներէն այն օրերուն, երբ Վրացեան կը վարէր թերթին խմբագրութիւնը (1925-1933):

Ծանօթ է, որ 1900-1901 թթ. Ա. Իսահակեան երկրորդ անգամ անցած էր Եւրոպա՝ իր ուսումը շարունակելու համար Ցիւրիխի համալսարանին մէջ: Ժրնևը, ուր կը գտնուէին «Դրօշակ»ի խմբագրատունը և Հ.Յ.Դ. Արևմտեան բիրոյի անդամները, մօտ էր, և երիտասարդ բանաստեղծը առիթ կ'ունենար այցելելու խմբագրատուն և աւելի մտերմանալու թերթի խմբագիրներուն և յատկապէս Քրիստափոր Միքայելեանին, որուն հետ առաջին անգամ ծանօթութիւն հաստատած էր Թիֆլիսի մէջ: Յայտնի է նոյնպէս, որ Դաշնակցութեան ռահվիրայ այս դէմքը օժտուած էր այնպիսի հոտառութեամբ, որուն շնորհիւ շնորհալի շարք մը գրողներ՝ Ա. Իսահակեան, Սիւմանթօ, Ա. Ահարոնեան և շատ ուրիշներ, իրենց տաղանդը ի սպաս պիտի դնէին Հայաստանի և հայութեան ազատագրութեան համար սկիզբ առած նորօրեայ պայքարին:

«Դրօշակ»ի համարներուն մէջ «**Հայ-Գուսան**» ստորագրութեամբ լոյս տեսնող «Հայդուկի երգեր»ուն շարքը այդ մտերմութեան արգասիքը պէտք է համարել:

1901 թ. Յունուարի բացառիկ թիւը (32 էջ) նուիրուած պիտի ըլլար Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակին, և Քրիստափոր կանուխէն (Նոյեմբեր) դիմած էր Ա. Իսահակեան-Հայ-Գուսանին՝ «**այրուող սրտից հրեղէն խօսքերի նոր հնչիւններ լսելու**»<sup>1</sup>: Պատասխանը քիչ մը ուշացած է, որովհետև Ա. Իսահակեանի նոր պոէմին ուղեկցող նամակը կը կրէ 1901 թ. Փետրուար 22 թուականը և գրուած է Վիեննայէն, ուր Ցիւրիխէն մեկնելով՝ գացած էր բանաստեղծը նախքան Կովկաս վերադարձը: Այսուհանդերձ

\*Ընդունուել է տպագրութեան 2.03.2017:

<sup>1</sup> Տես **Տասնամեակեան Հ.**, Քրիստափոր Միքայելեանի նամակները, Պէյրութ, 1993, էջ 193 և **Իսահակեան Աիկ**, Աւետիք Իսահակեան, գիտական կենսագրութիւն, Եր., 2000, էջ 533 և 541-547:

պոէմը տպուած է բացառիկին մէջ խմբագրականէն անմիջապէս ետք: Յայտնապէս 1901 թ. Փետրուարի վերջը կամ Մարտին, որովհետև այլապէս Փետրուարին ուղարկուած գրութիւնը չէր կրնար տեղ գրաւել Յունուարի թիւին մէջ: Արդէն «Դրօշակ»ի յաջորդ՝ թիւ 2 համարը ապրիլ ամսուն է:

Բնագրին և տպագրութեան միջև ընդհանուր կերպով չկան զգալի տարբերութիւններ. այսուհանդերձ հարկ կը տեսնենք ընթերցողին ինչպէս և ուսումնասիրողին ուշադրութեան յանձնել հետևեալները.

1. Վրացեանի արխիւին թուագրութեան յաջորդականութիւնը՝ ՍՎ 150/12 – ՍՎ 150/15 ճիշդ չէ: Բանաստեղծութիւնը, ըստ ձեռագրին և տպագրութեան, կը սկսի թիւ 15-էն և կը գրաւէ ձեռագրի 11 էջ, I-IV բաժանումներով և «Հայ-Գուսան» ստորագրութեամբ:

Էջատակին՝ փակագծերու մէջ, Իսահակեանի ձեռագրով կը կարդացուի.

**«Չափը ոտանաւորի մետրիկական է, էպիկական. չխրտնիք, որ զանազան տեղ տարբեր»:** Այս երկտողը հասկնալիօրէն չկայ տպագրութեան մէջ:

2. ՍՎ 150-13ը՝ ձեռագիր 2 էջ, փաստօրէն շարունակութիւնն է բանաստեղծութեան: Երևի աւարտական այս բաժինը (տպագրութեան մէջ՝ հատած V) դրկուած է աւելի ուշ, որովհետև էջին վերև Իսահակեան կը գրէ (վրան մատիտով գիծեր քաշուած են, որովհետև գրաշարուելու պէտք չունէին).

**«Միրելի Քրիստափոր»**

**Երբ Գուսանը վերջացնում է իր ասքը (էպոսը), տանտէրերը առհասարակ յետոյ քէֆ են սարքում,– այժմ էլ այսպիսի քէֆ է տեղի ունենում. որ եթէ չէք վերջացրել Դրօշակի շարումը, այս իմ գրութիւնը վերջը զետեղեցէք»:**

3. Թղթածրարի համար 14-ը Քրիստափորին ուղղուած նամակն է (տեսնել առանձին ծանօթագրութիւններով):

4. Համար 12-ը պարզապէս արտագրութիւնն է թիւ 15-ի էջ 11-ին: Արտագրութիւնը, ձեռագրէն դատելով, կատարած է նոյնինքն Քրիստափոր Միքայէլեան, որ զանց առած է էջատակի երկտողը, որովհետև այս բացատրութիւնը սահմանուած է խմբագրին և հետևաբար պէտք չէ յանձնուէր գրաշարին:

Ուստի ձեռագրերու թուագրութեան շարքը՝ ժամանակագրական և տրամաբանական կարգով, պէտք է կազմել հետևեալ ձևով.– 14, 15, 13:

Գալով բնագրի և տպագրութեան բաղդատական քննութեան՝ հետևեալ մատնանշելի տարբերութիւնները կը տեսնուին.

ա. Բնագրին մէջ հեղինակը իր բանաստեղծութիւնը խորագրած է՝

**Նուէր «Դրօշակի տասնամեակին»:**

Ձեռագրի «Դրօշակի»-նը վերածուած է «Դաշնակցութեան» և տպուած՝ **«Դաշնակցութեան տասնամեակին»:**

Ծանօթութեան համար պէտք է ըսել, որ թերթին համարը նուիրուած էր Դաշնակցութեան տասնամեակին, որ միաժամանակ «Դրօշակ»ի տասնամեակն էր. ապա այդ օրերուն Դրօշակեան և Դաշնակցութիւն միևնոյն առումով կը գործածուէին: Յայտնաբար Քրիստափոր նախընտրած է **«Դաշնակցութեան»**-ը:

բ. Զօնը բնագրին մէջ ունի հետևեալ ձևը.  
**Սագը չթողեց, որ կտրիձ դառնամ,  
Թուրը չթողեց, որ գուսան դառնամ:**

Տպագրութեան մէջ վերածուած է՝  
**Սագը չի թողնում, որ կտրիձ դառնամ,  
Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ:**

գ. Բնագրին մէջ՝ (Հատած II-ի 8-րդ տող)  
**Հանց կայծակը խոլոր ամպէն:**

Տպագրութիւնը՝  
**Հանց կայծակը խոշոր ամպէն:**

դ. Բնագրին մէջ՝ (Հատած II-ի վերջին մաս)

**Գուսան ախպէր, շատ ենք լացեր  
Հացն ու բարձր աղի թրջեր.  
Ո՛ր է սագդ, ան սրտիդ զարկ:**

Տպագրութիւն՝  
**Ձէնդ անսպառ, գուսան ախպէր  
Մեր աշխարհի բլբուլն ես խաս  
Ախրը Գուսան, շատ ենք լացեր,  
Հացն ու բարձր աղի թրջեր...**

ե. Բնագրին մէջ (Հատած II վերջին մաս)  
**Կրակէ խօսքեր, ամպէ ձէներով  
Տպուած է՝  
Հրեղէն խօսքեր, ամպի ձէներով:**

Ահա այն զգալի տարբերութիւնները, որ գոյութիւն ունին ձեռագիր բնագրին և տպագրութեան միջև: Մեր ունեցած տուեալներով կարելի չէ որոշակի բան ըսել, թէ այդ փոփոխութիւններուն համար կանխաւ առնուած էր արդեօք հեղինակին հաւանութիւնը կամ ոչ, բայց հաշուի առնելով հեղինակին ու խմբագրին փոխարարութեանց բնոյթը, պիտի ըսենք, որ առաջինին համարուր մեծ էր երկրորդի հասկացողութեան և ձաշակի վրայ:

Երուանդ Գ. Փամպուրեան  
(Պէյրութ)

## Summary

### ON THE POEM OF AV. ISAHAKYAN ENTITLED “ON THE TENTH ANNIVERSARY OF DASHNAKCUTYUN”

Ervand G. Pambukian (Beirut)

**Key words** – Av. Isahakyan, Ch. Mikaelian, Geneva, poem, Hay-Gusan, “Droshak”, Venice, decade, epic.

In the exceptionally rich archive of Simon Vratsyan, among other things, Avetik Isahakian’s handwritten texts have also been preserved. The text below (folder 150 / 12–15) is probably taken from the folder of the official newspaper of ARF Dashnaktsutyun – “Droshak” of those days when Vratsyan was the editor of the newspaper (1925–1933).

## Резюме

### О ПОЭМЕ АВ. ИСААКЯНА “К ДЕСЯТИЛЕТИЮ ДАШНАКЦУТЮН”

Ерванд Г. Памбукян (Бейрут)

**Ключевые слова** – Ав. Исаакян, Х. Микаелян, Женева, поэма, Ай-Гусан, «Дрошак», Венеция, десятилетие, эпический.

В исключительно богатом архиве Симона Вращяна среди прочего сохранились так же некоторые рукописные тексты Аветика Исаакяна. Ниже представленный текст (папка 150/12–15), вероятно, взят из папки официального органа АРФ Дашнакцутюн – “Дрошак” 1925–1933 гг., когда Вращян являлся его редактором.

22 Փետր., Վիեննա

Քրիստափոր ջան,

Երէկ նամակդ ստացայ. տեսայ որ կողմիցս նամարդուքին է բան չգրելը. մէկ էլ ուղիղն ասած քու ազիզ խաթըրը պահեցի, թէ չէ իսկի սիրտ չունէի: Մի խօսքով վերցրի թղթերս, կիսատ գրածներս, սիգար, սուրճ, կաթ, և սկսեցի գրել. երէկ գրեցի, վերջացրի մինչև կէս գիշեր. իսկ այսօր էլի նոյն տեղը արտագրեցի և այժմ ուղարկում եմ.– սրա վրայ ծախսեցի 4 ֆրանկ. պարտական ես (լուրջ չեմ ասում):

Կարծեմ լաւ բան է, էպիկական է, հին ռապսոտիների պէս. զգոյշ սխալներ չանենք:

«Ջաւահիր սարեր» – Ջաւոյի խաթեր համար գրեցի: Նրան կը յայտնես դա<sup>2</sup>:

Օրերս վատ են անցնում, մենակ եմ, տխուր. բժիշկը քնիւլեց. ունիմ Ne[ս]rasthenie, սրտի ջղայնութիւն. ծովում լողանալ խորհուրդ տուել, կամ Օդեսա կ’երթամ, կամ Վենետիկ, կամ ժընև կու գամ.– լիճը, գոնէ մի բան է: Փող լինէր, կ’երթայի Վենետիկ. տեսնեմ. յետոյ կը գրեմ. նամակս ստանալուն պէս յայտնիր ինձ:

Ժողովրդական բառեր կան, չփոխէք: Օր. հանց կը նշանակէ «ինչպէս» և այլն:

<sup>2</sup> **Ջաւահիր Ներսիսեան.** դաշնակցական ուսանողուհի ժընև, ուր հանդիպած էր իրեն բանաստեղծը: Աւելի ծանօթ է մտերմական Ջաւո անունով. յետագային՝ կինը Լևոն Ծանթի:

Կարօտալի բարևներ,  
Ձեր Աւօ  
Գուսան 7<sup>3</sup>  
Բօրիսից խաբար<sup>4</sup>

Կարո՞ղ ես մի 20 ֆր. դրկել. փողերս վերջացել է. Յիւրիխից ստանալիք ունիմ, բայց դեռ չստացայ. շնուտ դրկես – աւելի լաւ, նեղութիւն չեմ քաշէ:

«ԳԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ<sup>5</sup>

Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ,  
Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ

1

Գողթան քնարը, որ ազատութեան  
Գովքը կը երգեր Մասիս սարն՝ ի վեր, –  
Ա՛խ, շանտ վաղուց էր լու՛ն էր ու անձայն.  
Ու գուսանները քուն էին մտեր,  
Որոնց սրտերի արտուտն էր ձախրում՝  
Երգելով Ազատ– Մասիս սարն՝ ի վեր:  
Բայց երբ կտրիճի վան սիրտը թնդաց  
Սիրով, վրէժով հայրենի երկրի,  
Երբ հրացանի կոչը որոտաց –  
Կոչն ազատութեան Մասիս սարն՝ ի վեր, –  
Գողթան քնարը նորից զնգզնգաց  
Ու սիրտս ձախրեց Մասիս սարն՝ ի վեր:

2

**ԳՈՒՍԱՆԸ.**– Բարով ձեզի, հայ ախարտիք,  
Հանց լեռ ու ժեռ դուք քովե–քով,  
Բարով ձեզի, հայ քուրիկներ,  
Հանց գարդ ու վարդ դուք քովե– քով:  
Մեր աշխարհէն ելլեր, կուգամ –  
Մութ սարերէն, խոր ձորերէն,  
Կուի կարմիր տեղերէն:  
Հանց կայծակը խոշոր անպէն՝  
Սիրտս օձոտ ու խոցոտ՝  
Ձեր սրտի մէջ ահա կուգամ.  
Արնոտ սիրտը վրէժ կուզէ,  
Ով սիրտ ունի՝ դուրս ելնի.  
Քանց թէժ կրակ, վրէժ–կայծակ՝  
Ձեր սրտի մէջ ահա կուգամ:  
**ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.**– Բարով եկար, Գուսան ախպէր,  
Մեր աշխարհի, անո՞շ բլբուլ,  
Մեր աշխարհի հողն ես կոխեր,  
Էդ սուրբ հողին մատաղ լինի՞նք,  
Արի, նստի մեր աջ կողքին,  
Անուշ ձէնով սազ արա՛մ,

3 Գուսան 7, այսինքն եօթներորդը «Հայդուկի երգեր»ու շարքին: Արդարև «Դաշնակցութեան Տասնամեակին» պոէմը այդ շարքին 7րդ բանաստեղծութիւնն է:

4 Շատ հաւանաբար ակնարկութիւն է դաշնակցական յայտնի գործիչ Խաչատրեան Սմբատի՝ ծանօթ Բորիս ծածկանունով:

5 Տե՛ս «Դրօշակ», ժընև, N 1 (112), 1901, յունուար, էջ 4–6:

Մեր աշխարհի գովքն արա՛:  
**ԳՈՒՍԱՆԸ.**– Հայ-ախպրտիք, հայ-քուրիկներ,  
 Մեր աշխարհի ինչը մնաց,-  
 Հուրը գնաց,

**Մուրը մնաց:**

**Ա՛յս, մեր ազգը, վա՛յս մեր աշխարհն**

Միխիր դարձեր, ատեր-աւար.  
 Մեր արտերում՝ գերնդու տեղ  
 Եաթաղանն է հիմի գնգում,  
 Խաս հաւքերի ծիւ-ծիւի տեղ  
 Քոռ բուերն են վայում-վոյում.  
 Քիւրդերի հետ սև գէլերն են  
 Մեր դաշտերում՝ գուլում՝ օռնում.  
 Ա՛յս, ժողովուրդն անտուն-անտէր,  
 Թափառական ու բնաւեր՝  
 Իր քրտինքով շեղջած ցորնէն  
 Կուտ կը մուրայ մեր դիւմնէն...  
 Մեր դարդերը ծով են դարձեր.  
 Խորունկ դարդը երգ չունի.  
 Սրտիս լարերն են կտրտվեր,  
 Միրտս ձեզի երգ չ՛ունի:  
 Մի վայրի հաւք մի օր տեսաւ  
 Բլբուլ կուլար պուտ-պուտ արուն.  
 Ասաւ- «Ինչո՞ սիրուն բլբու՛լ,  
 Ինչո՞ կուլաս պուտ-պուտ արուն.  
 Տեն, սար ու ձոր, վարդ ու սմբուլ  
 Կարօտ քաշեն քու վառ ձէնին,  
 Իսկ դու ինչո՞ էս չոր չօլում՝  
 Այս ու վախով կուլաս արուն»...  
 – «Ի՛նչ կը խօսիս, բլբուլն ասաւ,  
 Խենթ ու անդարդ վէրի թռչուն,  
 Դուն չտեսար, դիւմանն եկաւ,  
 Սևցուց դէմքը մեր արևուն.  
 Ձմեռ նստեց մեր սարերուն,  
 Չորցուց ծիլերն ծաղկըներուն,  
 Արունն ելաւ, գո՛չ-գո՛չ գնաց  
 Մեր մայրերուն, ձագուկներուն»...

**Է՛յ, ախպրտիք, մեզի համար**

Կեանքն էլ ո՛չ մի երգ չ՛ունի,  
 Քանի որ մենք սուգն ենք առնում՝  
 Մեր արիւնտ աշխարհի,  
 Քանի որ մենք կոչն ենք լում –  
 Կոչն հրեղէն վրէժի  
 Մեր մայրերի, քոյրերի...  
 Դուք չտեսա՛ք, հայ-ախպրտիք,  
 Արյունն ելաւ, գո՛չ-գո՛չ գնաց  
 Մեր մայրերուն, ձագուկներուն...  
 Խոցած սիրտը վրէժ կուզէ,  
 Ճակատ-ձակտի՝ դիւմնի դէմ՝  
 Ո՛վ սիրտ ունի՝ թող ելնի:  
**ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.**– Գուսան ախպէ՛ր, անուշ բլբու՛լ,  
 Մեր ախպրտանց դարդի ծովէն  
 Արնոտ ալիք, սգի ձէներ  
 Վաղուց է որ մեզ հասեր են,

Մենք մեր կեանքով էնոնց մատաղ,  
 Մենք ամէնքս մեր աշխարհի,  
 Մեր ախարտանց սուրբ ուղուրին,  
 Ա՛խ, վաղուց է՛, Գուսան ախալէր,  
 Մեր աշխարհի, մեր սարերի  
 Անուշ գովքը չենք լսեր.  
 Մեր Մասիսէն, մեր Արազէն  
 Փափագ-պապակ կարօտ ենք,  
 Հանով-հոտով սագ արա՛...  
**ԳՈՒՍԱՆԸ.**– Մեր սարերէն, խոր ձորերէն  
 Պղտոր-պղտոր կուգաս, Արա՛գ,  
 Մեր սրտերէն, խոր աչքերէն  
 Արուն քամեր, կերթան, Արա՛գ...  
 Մեր սարերէն, մութ ձորերէն  
 Ոլոր-մոլոր կերթաս, Արա՛գ.  
 Ա՛յ սարեր, ջան սարեր,  
**Այնաստի սարեր...**  
**Քանի հարուր-հարուր տարի**  
**Մեր սրտերէն ելեր, կերթաս.**  
**Մեր դարդերով, մեր ցաւերով**  
**Խոլոր-մոլոր կերթաս, Արա՛գ...**  
**Մեր սարերէն, մութ ձորերէն**  
 Մեր դարդերով կերթան Արա՛գ.  
 Ա՛յ սարեր, Հայ-սարեր,  
 Ջան անուշ սարեր...  
 Ու դարերով, մեր դարդերով  
 Էս աշխարհի քար-ապառաժ,  
 Անգութ խղճին միշտ զարնելով՝  
 Տխուր-տրտում կերթաս, Արա՛գ...  
 Մեր սարերէն, խոր ձորերէն  
 Արուն քամեր, կերթան, Արա՛գ.  
 Ա՛յ սարեր, ջան ձորեր,  
 Ջաւահիր սարեր...  
 Ա՛խ, աշխարհը անխղճմտանք  
 Քեզ չէ գթայ, Ազիզ-Արա՛գ,  
 Քու բողոքին, քու մորմոքին,  
 Չի էլ լսի, արնոտ Արա՛գ...  
 Մեր սարերէն, մութ ձորերէն  
 Տխուր-տրտում կերթան, Արա՛գ.  
 Ա՛յ սարեր, հայ ձորեր,  
 Ջնրուխտի սարեր...  
 Դուն էլ Արա՛գ, մեր արունով  
 Էս աշխարհի խղճի վրայ  
 Դիզվիր, դարձիր սև-դառն ծով,–  
 Թու՛յն ու արո՛ն, Ազիզ-Արա՛գ...  
 Մեր սարերէն, մեր ձորերէն  
 Արուն քամեր, կերթան, Արա՛գ.  
 Ա՛յ սարեր, Հայ սարեր  
 Ջան, անուշ սարեր,  
 Այնաստի սարեր...  
**ԺՈՂՈՎՈՒՐԳԸ.**– Ձէնդ անսպառ, Գուսան ախալէր,  
 Մեր աշխարհի բլբուլն Ես խաս,  
 Ա՛խըր, Գուսան, շան ենք լացեր,  
**Հացն ու բարձը աղի թրջեր...**

Ու՞ր է սագդ, ան, սրտիդ զանրկ,  
 Կրակ քցէ՛ մեր սրտերը,  
 Կանանչ յուսով սագ արա՛:  
**ԳՈՒՄԱՆԸ.**– Երբ ես տեսայ մեր աշխարհի  
 Ցավն ու դարդը ծովածաւալ՝  
 Սիրտս խորունկ ձէն տւեց,–  
 Ջարկի սագս ժեռ քարերին,  
 Հազար փշուր–փշրանք արի.  
 Ասի– ամօթ, շանտ ամօթ է  
 Էդ փէտ–լեզուն իմ ծով սրտին:  
 Մինչև չ՝ ըլնի մութ ու գիշեր,  
 Կարմիր օրը չի շողայ,–  
 Մինչև չ՝ լանք արուն–արցունք,  
 Մեր արևը չի դուրս գայ,  
 Կարմիր–Ջատիկը չի գայ:  
 Էյ, ջան, հա՛, ջան...  
 Հազար սիրտ ունիմ,  
 Մէնակ մի լեզու.  
 Լեզուվ էլ սիրտը չի բացւի.  
 Էյ հայ–ախպրտիք,  
 Տւէք հրացան–  
 Սրտիս սերտ սեղմեմ.  
 Մարդ հրացանով շանտ լաւ կխօսի–  
 Հրեղէն խօսքեր, ամպի ձէներով...  
 Տեսէք, վերև, ամպի փէշով  
 Երեք տեսակ հաւք կանցնի,–  
 Մէկը այ կանչեց,  
 Մէկը վայ կանչեց,  
 Մէկը հայ կանչեց.  
 Ու հրացանս էնոնց պարպեցի.  
 Այ կանչողը թողեց փախաւ,  
 Վայ կանչողը զարկաւ, ընկաւ,  
**Հայ կանչողը Հայ, Հայ կանչեց,**  
 Եկաւ, նստաւ գլխուս վրայ:  
 Ով Հայ կանչէ, Հային կանչէ,  
 Թող գայ, բազմի գլխուս վրայ...

### 3

Սիփան սարէն քամին կուգայ,  
 Սիրտս քամուն բացեր եմ.  
 Ջան, սարերի ազատ քամի,  
 Ես էլ ձեզ պէս ազատ եմ:  
 Դուրս եմ եկել, քեզ եմ կանչում,  
 Դուրս եկ, դիւշման, դէմ առ դէմ.  
 Գիշեր–ցերեկ քեզ եմ փնտռում,  
 Ես քեզ սրտանց կարոտ եմ:  
 Բաց, կուրծքդ բաց, կարօտ եմ քեզ,  
 Ա՛ն համբուրս վան–վառման–  
 Իմ երկաթէ ռումբ–համբուրս  
 Ա՛ն սրտիդ մէջ, դիւշման ջան:  
 Ելնինք, հայեր, ոտքի ելնինք,  
 Կռիւ–հարսնիք մէկտեղ երթանք.  
 Մասըսից մինչև Առնոս, Տարոս  
 Մի մարդու պէս ելնինք, կայնինք:



Մեր «Դրօշակն» ազատ հովոււմ  
Բարձր ու հպարտ կը ծփայ.  
Մեր «Դրօշակն» ապրած կենայ –  
Մեր սրտերում, մեր վրայ:  
Դէպի կռիւ դաշտ մեր Դրօշի տակ,  
Մեր դիւշմանի դէմ, մեր պատուի համար.  
Ու թէ որ ընկնինք, մեր վառ արունով  
Մեզնից կը սրբենք այս ամօթն իսպառ:  
Ու թէ որ ընկնինք, բոցը մեր արնան  
Սիրիկ կը դառնայ սերընդի սրտում,  
Ու մեր ձեռներէն վար ընկած շղթան  
Անուր կը կապէ գագան թշնամուն:  
Մեր ընկած տեղէն նոր քաջ կը կանգնի.  
Կեցցէ՛ մեր մահը, որ կեանք է ծնում.  
Մեր գերեզմանը մայրն է նոր կեանքի,  
Կեցցէ՛ Սուրբ գործը – Յեղափոխութիւն:

#### 4

Գոռգոռալով ամպերն եկան,  
Սարն էլ ամպին ձէն կուտայ.  
Հայ կտրիճներ թևաւորան,  
Հայն էլ հային ձէն կուտայ:  
Ջան ամպերը կռիւ կ'երթան՝  
Կայծակէ թուր մէջքերին.  
Հայ-արծիւներ կռիւ կ'երթան՝  
Սուր-հրացան ձեռքերին:  
Հայ կտրիճներ, հայ արծիվներ,  
Ուր որ երթանք, ուր որ լինինք,  
Մէջ մութ ամպին, մոլոր ճամպին,  
Մեր «Դրօշակը» մեր գլխին:  
Մեր աշխարհի սէրն ու արունք  
Մեզ թուր ու թև ու թիկունք.  
Բարին մեզ հետ, բարով երթանք,  
Դև-սուլթանի վրէն երթանք:  
Ուր որ հասնինք, ուր որ երթանք,  
Թուրքը փռի մեր ոտաց տակ.  
Անապատը աղբուր բղխէ,  
Մութ գիշերին շողայ լուսնակ.  
Քուրդը փռի մեր ոտաց տակ,  
Փակ դռները բացին արձակ,  
Սարը չոքի, գլուխ բանայ,  
Ծովը ձղի ու ձամբայ տայ:  
Բարին մեզ հետ, բարով երթանք,  
Դև-սուլթանի վրէն երթանք:  
Կեցցէ՛, կեցցէ՛, միշտ վեհ կեցցէ՛  
Մեր «Դրօշակը» մեր վրայ.  
Մեր «Դրօշակն Ազատութեան»  
Բարձր, բարձր միշտ ծփայ...  
Քիչ էլ կանցնի՝ Հայու երկնէն  
Արև կ'ելնի, –  
Հայուն Արևն կանանչ-կարմիր,  
Հուրն 'ի հրեղէն,  
Այլուն-փայլուն,  
Նոր-Արև.

Հայու Արևն  
Նշխուն-շաշխուն,  
Ծին-ծիրանի,  
Նոր ու նոնի,  
Վան-Արև:  
Հայոց արևին տանք բարով,  
Հազար բարի, հազար բարով:

## 5

ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՆՈՒՏԷՐԸ.-  
Էյ հարս-մորպէտ<sup>6</sup>, խաթուն տնտես  
Գինի ունինք եօթը կարաս  
Եօթը կարսի գինին էլ խաս.  
Էն մենձ գաւով գինի բերէք,  
Նռան-ալան գինին բերէք.  
Գուսանի հետ, դուռ ու դրկեց,  
Հայի հալալ սեղան նստենք:  
**ԳՈՒՍԱՆ.**- Հայ ախպրտիք, հայ-քուրիկներ,  
Գինին արնան նշանն է.-  
Գինին խմենք, արուն թափենք  
Հայոց ազգի կենացը:  
Էյ, հարս խաթուն, ողջ մնաս,  
Ծլիս-ծաղկիս, ծառ դառնաս,  
Գլխատրդ ողջ մնայ:  
Հայ-ախպրտիք, հայ-քուրիկնե՛ր,  
Ձեր օճախը միշտ վառ մնայ,  
Ձեր տունն ու դուռ միշտ շէն մնայ.  
Եօթը որդով սեղան նստիք,  
Եօթը օրօցք միշտ շրրիսկայ.  
Մէկ հիւրն երթայ, երկուսը գայ,  
Տեղը դատարկ չ'մնայ.  
Ամպարներդ հացով մնան,  
Պատով մնաք, բարձով մնաք.  
Քարը բռնէք՝ լալ դառնայ,  
Քուր բռնէք՝ զառ դառնայ.  
Գինի խմենք, արուն թափենք,  
Հայոց ազգի կենացը:  
Գինի խմենք, զարկենք, զարկենք,  
Հայոց ազգի կենացը:  
Հայոց ազգը ապրած կենայ  
Հազար-հազար բարով, տարով.  
Հայու «Դրօշակն» ապրած կենայ,  
Հայու արևն ապրած կենայ  
Հազար, հազար բարով, տարով...

## ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

6 «Մօրպէտ»-ը տանտիրուհուն օգնող ջահիլ հարսներ: